Նախագիծ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև 1996թ. սեպտեմբերի 27-ի Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի և ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման ու գործառնման համար հողամասերի հանձնման ու օգտագործման կարգի մասին համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանի Դաշնության կառավարությունը, այսուհետև՝ Կողմեր,

ղեկավարվելով 1996թ. սեպտեմբերի 27-ի Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի և ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման ու գործման համար հողամասերի հանձնման ու օգտագործման կարգի մասին համաձայնագրով (այսուհետ՝ Համաձայնագիր) և նշված Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 2000 թ. սեպտեմբերի 27-ի, 2003 թ. նոյեմբերի 11-ի, 2005թ. նոյեմբերի 30-ի, ինչպես նաև 2007թ. սեպտեմբերի 25-ի արձանագրություններով,

հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության տարածքում տեղակայված ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների կազմի փոփոխությունը,

համաձանեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Համաձայնագրին կից հավելվածով նախատեսված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի տեղաբաշխման կետերի ցանկից հանել հետևյալ օբյեկտները.

զինավան N41, Երևան, Օրբելի 29, հասցեում տեղակայված 372-րդ զինվորական հոսպիտալ,

զինավան N54, Երևան, Զ.Սարկավագի 54 հասցեում տեղակայված 123-րդ ՄՀԳ-ի «Քանաքեռ» զինավան,

զինավանի N67, Երևան, Զ.Սարկավագի 50 հասցեում տեղակայված նախկին N 16 պոլիկլինիկայի շենք,

զինական N4, Երևան, Վերին Նուբարաշենում տեղակայված հրաձգարան,

զինական N3, Երևան, Վերին Նուբարաշենում տեղակայված ուսումնական կենտրոն:

Հոդված 2

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցումը ստանալու ամսաթվից:

Սույն Արձանագրությունը Համաձայնագրի անբաժանելի մասն է ու գործում է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին 1995թ. մարտի 16-ի պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Կատարված է_____-ում _____-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության անունից	Ռուսաստանի Դաշնության կառավարության անունից